ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1434 14.07.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏՍ
ՄՏԻՑ № 2944
«15» 07 2014

Հարգելի պարոն Գասպարյան,

ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբը հունիս ամսին այցելելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ, արձանագրել էր, որ

1. ՁՊՎ-ի երկու հարկերի սանհանգույցներում սանիտարահիգիենիկ թղթերը բացակայում էին:
2. Ինչպես նախորդ այցելությունների ընթացքում, այնպես էլ տվյալ այցելության ժամանակ, արձանագրվեց, որ երկու հարկերի զուգարանների զուգարանակոնքերի ջրահեռացման համակարգերը չեն գործում և ջրերը անընդմեջ հոսում են:
3. Էդիկ Կարենի Հարությունյանը բերման է ենթարկվել 10.04.2014թ-ին ժամը 22^{25}-ին: Վերջին անգամ խցից դուրս է բերվել և տեղափոխվել է քննություն դուրս 13.04.2014թ-ին ժամը 18^{05}-ից մինչև 18^{55} ընկած ժամանակահատվածում, /*փաստը հաստատող լուսանկար – 1*/, բայց ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի Է. Հարությունյանը կալանավորվել է արդեն իսկ ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում՝ 13.04.2014թ-ին ժամը 19^{40}: /*փաստը հաստատող լուսանկար – 2*/:
4. Տիգրան Վարդանի Ասատրյանը ձերբակալվել է 06.02.2014թ-ին ժամը 22^{30}-ին: 07.02.2014 թ-ին ժամը 17^{25}-ին խցից դուրս է բերվել և տեղափոխվել է քննություն դուրս: Միայն 17 ժամ անց՝ քննիչի կողմից ներկայացվել է նրան ազատ արձակելու մասին որոշումը: Արդյունքում՝ հնարավոր չէ պարզել թե Տ. Ասատրյանը երբ է ազատ արձակվել և արդյոք խախտվել է ձերբակալվածի կարգավիճակում գտնվելու ընթացքում նրա իրավունքները: /*փաստը հաստատող լուսանկար – 3*/

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏՍ
ՄՏԻՑ № 5632
«15» 07 2014թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

5. Հայկ Վասիլի Սարգսյանի նկատմամբ կատարվել է անկանոն քննչական գործողություններ: Նա ՀՊՎ-ից դուրս է եկել և տեղափոխվել է քննություն դուրս 19.02.2014թ-ին ժամը 10^{25}-ից մինչև 20.02.2014թ-ի ժամը 01^{05}-ը: Տևել է 15 ժամ: 8 ժամ հետո կրկին՝ 20.02.2014թ-ին ժամը 09^{15}-ին տեղափոխվել է քննություն դուրս և բերվել 21.02.2014թ-ին ժամը 02^{05}-ին և տևել է 17 ժամ: /*փաստը հաստատող լուսանկար – 4, 5*/
6. Արթուր Բաբկենի Խաչատրյանը քննություն դուրս է տեղափոխվել 01.03.2014թ-ին ժամը 12^{05}-ից մինչև 02.03.2014թ-ին ժամը 00^{05}: Ընդհանուր՝ 12 ժամ: /*փաստը հաստատող լուսանկար – 6*/
7. Աննա Դավիթի Մեսրոպյանը, Լիլիթ Շիրինի Սարգսյանը և Ալիսա Վարդանի Հակոբյանը միաժամանակ 01.05.2014թ-ին ժամը 13^{05}-ին նույն պահանջագրով տեղափոխվել են քննություն դուրս: Հաջորդաբար հետ են բերվել ՀՊՎ՝ 02.05.2014թ-ին ժամը 02^{30}-ին, ժամը 01^{50}-ին և ժամը 02^{00}: Երեքն էլ մոտավորապես 13 ժամ մասնակցել են քննչական գործողությունների: /*փաստը հաստատող լուսանկար – 7*/: Նույն օրը՝ 02.05.2014թ-ին ժամը 11^{05}-ին Լ.Սարգսյանը, Ա.Մեսրոպյանը և Ա.Հակոբյանը կրկին տեղափոխվել են քննության՝ դուրս: Լ.Սարգսյանի և Ա.Մեսրոպյանի դեպքում միայն 14 ժամ անց 03.05.2014թ-ին ժամը 01^{10}-ին և Ա.Հակոբյանի դեպքում՝ 13.5 ժամ անց՝ 03.05.2014թ-ին ժամը 00^{30}-ին ստացվել է ազատ արձակման որոշումները: /*փաստը հաստատող լուսանկար – 8*/:
8. Արթուր Էդուրդի Վարդանյանը քննչական գործողություն կատարելու նպատակով ՀՊՎ-ից դուրս է բերվել և տեղափոխվել է 23.05.2014թ-ին ժամը 12^{15}-ին և միայն 26 ժամ անց՝ 24.05.2014թ-ին ժամը 14^{10}-ին ստացվել է նրա ազատ արձակման որոշումը: /*փաստը հաստատող լուսանկար – 9*/:
9. Աշոտ Մամիկոնի Կարապետյանը ձերբակալվել է 09.04.2014թ-ին ժամը 19^{40}-ին: 12.04.2014թ-ին ժամը 15^{40}-ին տեղափոխվել է քննություն դուրս՝ և միայն քննչական գործողությունից մոտ 22 ժամ անց, իսկ արգելանքի վերցնելու 72 ժամը լրանալուց 17 ժամ անց ստացվել է նրա ազատ արձակելու մասին որոշումը: /*փաստը հաստատող լուսանկար – 10, 11*/:

Նշվածի փաստի վերաբերյալ, չկա ոչ մի փաստաթուղթ, որը կհաստատի, որ տվյալ անձը արգելանքի վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում է ազատ արձակվել:

10. Մինաս Արսենի Մանոյանը արգելանքի է վերցվել 20.04.2014թ-ին ժամը 21^{15}-ին: Քննություն դուրս է տարվել 23.04.2014թ-ին ժամը 12^{40}-ին և միայն 15 ժամ հետո 24.04.2014թ-ին ժամը 03^{30}-ին ստացվել է նրա ազատ արձակման մասին որոշումը: /*փաստը հաստատող լուսանկար – 12*/:

11. Հեղինե Հայկազի Հարթենյանը ձերբակալվել է 20.02.2014թ-ին ժամը 22[30]-ին: ՁՊՎ է ընդունվել 21.02.2014թ-ին ժամը 04[45]-ին: 23.02.2014թ-ին ժամը 13[00]-ին Հ.Հարթենյանը տեղափոխվել է սբ. Գ.Լուսավորիչ բժշկական կենտրոն, որից հետո չկա ոչ մի տեղեկություն նրան կալանավորելու և ՁՊՎ հետ ընդունելու մասին: Բայց ըստ <<Ձերբակալված անձանց հաշվառման>> գրանցամատյանի նա 26.02.2014թ-ին ժամը 17[00]-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Աբովյան >> ՔԿՀ : Տվյալ գրանցամատյանում առկա է գրառում այն մասին, որ Հ. Հարթենյանին վերաբերվող 32 թերթից բաղկացած անձնական գործը ստացել է ուղեկցողը /*փաստը հաստատող լուսանկար – 13,14*/:

12. Արթուր Վոլոդիայի Պողոսյանը ձերբակալվել է 17.01.2014թ-ին ժամը 19[40]-ին, բայց ՁՊՎ է ընդունվել 17 ժամ անց՝ 18.01.2014թ-ին ժամը 12[45]-ին: Վերջին անգամ Ա. Պողոսյանը խցից դուրս է բերվել և տեղափոխվել է քննություն դուրս՝ 20.01.2014թ-ին ժամը 12[10]-ին և միայն 30 ժամ անց՝ 21.01.2014թ-ին ժամը 18[30]-ին է ստացվել նրա ազատ արձակման մասին որոշումը: /*փաստը հաստատող լուսանկար – 15, 16*/:

Դիտորդական խումբը վերոնշյալ փաստերը ներկայացնելով՝ ևս մեկ անգամ հայտնում է իր մտահոգությունը, որ քննիչները օգտագործում են առկա օրենսդրական բացերը, և մեկ նպատակի վրա հղում կատարելով /**քննություն դուրս**/ իրականացնում են տարբեր գործողություններ /քննչական գործողություն, հարցաքննություն, դատաքննությանը մասնակցության ապահովվում և այլն/:

Վերը նշվածի վերաբերյալ Դիտորդական խմբի տարբեր ժամանակահատվածների ընթացքում ներկայացված տվյալ հիմնախնդրին ի պատասխան, ոստիկանության կողմից պարզաբանում է կատարվել, որ անձը դուրս է բերվել ոչ թե հարցաքննության՝ այլ քննչական գործողություն կատարելու նպատակով, որը կանոնակարգված չէ օրենքով, և քննիչը կարող է քննչական գործողությունները իրականացնել անսահմանափակ տևողությամբ:

Խումբը գտնում է, որ տվյալ պարզաբանումը հիմնազուրկ է, և պահանջում է, որ ՀՀ կառավարության կողմից 02.04.2009թ-ի թիվ 351-Ն որոշման 40 և 41 կետերի պահանջներով լրացվեն քննիչների կողմից ներկայացվող պահանջագրերը, և ամենակարևորը նշվի, թե տվյալ անձը ինչ նպատակով և ինչ հասցեով է տեղափոխվում, և միաժամանակ ՁՊՎ-ի գրանցամատյանում նշվի, թե անձը, ինչ նպատակով է ՁՊՎ-ի տարածքից դուրս բերվել և ուր է տեղափոխվել:

Դիտորդական խումբը միաժամանակ մտահոգություն է հայտնում այն փաստով, որ ձերբակալվածը ՁՊՎ-ից դուրս է բերվում քննչական գործողություններ կատարելու նպատակով,

բայց տեղափոխվում է դատարան խափանման միջոց կիրառելու համար՝ անտեսվելով 351-Ն որոշման 40 և 41 կետերի պահանջները, կամ ազատ է արձակվում՝ անտեսելով <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջները:

Եվս մեկ անգամ խնդրում ենք հիմք ընդունել <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջը, այն է՝ << *Ձերբակալված անձանց արգելանքից անհապաղ ազատում է ձերբակալվածներին պահելու վայրերի պետը քրեական վարույթն իրականացնող մարմնի կամ հետաքննության մարմնի որոշման հիման վրա, կամ երբ լրացել է ձերբակալման օրենքով սահմանված առավելագույն ժամկետը*>>:

Այսպիսով, խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և Դիտորդական խմբի կողմից առաջ քաշված մտահոգությունները և տալ մեկնաբանություն՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելով:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-2003 «21» 08 2014թ.

Ձեր 14.07.2014թ. թիվ 2621/1434 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

1.2. Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հունիս ամսին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ այցելության ժամանակահատվածը համընկել է ՁՊՎ-ի հերթափոխի ընդունման-հանձնման ժամանակահատվածի հետ: Այդ ժամանակ տեխնիկական աշխատակիցների կողմից իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, ինչի համար ծորակները բացվել են ստուգումներ կատարելու և անսարքությունները վերացնելու համար, որից հետո սանհանգույցներում դրվել է հիգիենիկ թուղթ:

3. Էդիկ Կարենի Հարությունյանը 10.04.2014թ. ժամը 20.40-ին բերման է ենթարկվել ոստիկանության Էրեբունու բաժին և նույն օրը ժամը 22.55-ին ձերբակալվել է: 13.04.2014թ. ժամը 18.05-ին տեղափոխվել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Վերջինիս նկատմամբ կալանավորումը կիրառելու միջնորդությունը քննարկելու համար: Դատական նիստի ժամանակ մեղադրյալ Է.Հարությունյանը դրսևորել է ոչ ադեկվատ վարքագիծ, կատարել է անկանոն շարժումներ, որի պատճառով դատական նիստն ընդհատվել է և կանչվել է շտապ օգնություն: Բժիշկը հետազոտել է Է.Հարությունյանին և դատարանին հայտնել, որ վերջինիս կողմից դրսևորվել է շինծու վարք՝ սիմուլացիա: Դրանից հետո Է.Հարությունյանը հեռացվել է դատական նիստերի դահլիճից և միջնորդությունը քննարկվել է վերջինիս բացակայությամբ: Այդ իսկ պատճառով կալանավորման ժամը նշվել է 19.40:

4. Տիգրան Ասատրյանը ձերբակալվել է 06.02.2014թ. ժամը 22.30-ին: 07.02.2014թ. ժամը 17.25-ին դուրս է բերվել ՁՊՎ-ից և տեղափոխվել է Երևան քաղաքի քննչական վարչություն, որտեղ վերջինիս մասնակցությամբ կատարվել են քննչական գործողություններ, այնուհետև որոշում է կայացվել Տ.Ասատրյանին արգելանքից ազատելու մասին և խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Նույն օրը՝ 22.05-ից մինչև 23.55-ն ընկած ժամանակահատվածում Տ.Ասատրյանի մասնակցությամբ վերջինիս բնակության վայրում կատարվել է խուզարկություն: Տ.Ասատրյանին արգելանքից ազատելու մասին որոշումը ՁՊՎ է հանձնվել 08.02.2014թ.:

5. Հայկ Վասիլի Սարգսյանը ձերբակալվել է 18.02.2014թ. ժամը 15.20-ին: 19.02.2014թ. ժամը 10.25-ից մինչև 20.02.2014թ. ժամը 01.05-ն ընկած ժամանակահատվածում դուրս է բերվել ՁՊՎ-ից՝ նրա մասնակցությամբ մի շարք քննչական և դատավարական գործողություններ կատարելու համար:
20.02.2014թ. ժամը 09.15-ից մինչև 21.02.2014թ. ժամը 02.05-ն ընկած ժամանակահատվածում Հ. Սարգսյանը դուրս է բերվել ՁՊՎ-ից կրկին քննչական գործողությունների կատարմանը մասնակցելու նպատակով, որի ընթացքում նաև լրացուցիչ հարցաքննվել է իր կողմից կատարած թվով 50 դրվագ բնակարանային գողությունների հանգամանքների շուրջ:
6. Արթուր Խաչատրյանը ՁՊՎ-ից դուրս է բերվել 01.03.2014թ. և տեղափոխվել է Քանաքեռ-Զեյթունի քննչական բաժին, որտեղ լրացուցիչ հարցաքննվել է իր կողմից կատարված 6 դրվագ գողությունների հանգամանքների շուրջ, այնուհետև կատարվել են մի շարք քննչական գործողություններ, որից հետո ժամը 23.30-ի սահմաններում վերջինս հանձնվել է ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի աշխատակիցներին՝ ՁՊՎ տեղափոխելու համար:
7. Աննա Դավթի Մեսրոպյանը, Լիլիթ Շիրինի Սարգսյանը և Ալիսա Վարդանի Հակոբյանը ձերբակալվել են 30.04.2014թ. ժամը 22.20-ին: 01.05.2014թ. վերջիններս Երևան քաղաքի ՁՊՎ-ից դուրս են բերվել և տեղափոխվել Նոր Նորքի քննչական բաժին, որտեղ լրացուցիչ հարցաքննվել են իրենց կողմից կատարած թվով 15 դրվագ գողությունների վերաբերյալ: Նրանց մասնակցությամբ կատարվել է քննչական փորձարարություն, որի ընթացքում մատնացույց են արվել դեպքի վայրերը: 02.05.2014թ. ժամը 11.05-ին Լ.Սարգսյանը, Ա.Մեսրոպյանը և Ա.Հակոբյանը կրկին տեղափոխվել են Նոր Նորքի քննչական բաժին, որտեղ վերջիններիս մեղադրանք է առաջադրվել, ապա ապահովվել է նրանց ներկայությունը դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննության առնելու համար: Դատարանի կողմից մերժվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու քննիչի միջնորդությունը և 03.05.2014թ. ժամը 00.30-ին և 01.10-ին վերոգրյալ անձանց ազատ արձակման վերաբերյալ քննիչի որոշումներն ուղարկվել են ՁՊՎ:
8. Արթուր Էդուարդի Վարդանյանը ձերբակալվել է 22.05.2014թ. ժամը 22.25-ին, 23.05.2014թ. մեղադրանք առաջադրելուց անմիջապես հետո միջնորդություն է ներկայացվել դատարան՝ մեղադրյալ Ա.Վարդանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին: Դատարանի որոշմամբ Ա.Վարդանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց է ընտրվել 2 ամիս ժամանակով, միաժամանակ դատարանը մեղադրյալ Ա.Վարդանյանին գրավով կալանքից ազատելը ճանաչվել է թույլատրելի: Դատական նիստն ավարտվել է ժամը 23.00-ին, նիստից 30 րոպե անց մեղադրյալի պաշտպանը ներկայացրել է դատարանի դեպոզիտի հաշվին գրավի համար սահմանված գումարը վճարված լինելու վերաբերյալ անդորրագիրը: Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ մեղադրյալ Ա.Վարդանյանն անհապաղ ազատվել է արգելանքից, որոշման մեկ օրինակը նույն օրը ուղարկվել է Երևան քաղաքի վարչության ՁՊՎ:
9. Աշոտ Մամիկոնի Կարապետյանը ձերբակալվել է 09.04.2014թ. ժամը 19.40-ին: 12.04.2014թ. ժամը 11.30-ին նրան մեղադրանք է առաջադրվել, նույն օրը կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն է ներկայացվել դատարան: Քննիչի միջնորդությունը դատարանի որոշմամբ մերժվել է, նույն օրը վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: 13.04.2014թ. որոշումներն ուղարկվել են Երևան քաղաքի ՁՊՎ:
10. Մինաս Արսենի Մանոյանը բերման է ենթարկվել ու ձերբակալվել է 21.04.2014թ. ժամը 00.10-ին: 23.04.2014թ. ժամը 12.15-ին նրան մեղադրանք է առաջադրվել, նույն օրը միջնորդություն է ներկայացվել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին: Դատարանի կողմից բավարարվել է միջնորդությունը միաժամանակ մեղադրյալին գրավով կալանքից ազատելը ճանաչվել է թույլատրելի: Նույն օրը մեղադրյալի պաշտպանը ներկայացրել է գրավը մուծված լինելու վերաբերյալ անդորրագիր, ինչից հետո անհապաղ որոշում է կայացվել մեղադրյալ Մ.Մանոյանին կալանքից ազատելու մասին: Նշված որոշման մեկ օրինակը նույն օրը ուղարկվել է Երևան քաղաքի վարչության ՁՊՎ:
11. Հեղինե Հայկազի Հարթենյանը ձերբակալվել է 20.02.2014թ. ժամը 22.30-ին: 23.02.2014թ. որոշում է կայացվել Հ.Հարթենյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն վերջինիս առողջական վիճակի վատթարացման հետևանքով հնարավոր չի եղել դատավարական գործողությունն ավարտին հասցնել, նույն օրը ժամը 16.43-ին Հ.Հարթենյանը տեղափոխվել է հիվանդանոց: 24.02.2014թ. Հ.Հարթենյանին մեղադրանք է առաջադրվել, 25.02.2014թ. միջնորդություն է ներկայացվել Ավան և Նոր

Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Հ.Հարթենյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար և վերջինս բժշկական կենտրոնից ներկայացվել է դատարան: Դատարանի կողմից բավարարվել է միջնորդությունը և Հ.Հարթենյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, միաժամանակ մեղադրյալ Հ.Հարթենյանին գրավով կալանքից ազատելը ճանաչվել է թույլատրելի: Դատարանից Հ.Հարթենյանը տեղափոխվել է Նոր Նորքի բաժնի հերթապահ մաս, այնուհետև <<Աբովյան>> ՔԿՀ:

12. Արթուր Վոլոդյայի Պողոսյանը 17.01.2014թ. ժամը 19.40-ին բերման է ենթարկվել ոստիկանության Կենտրոնականի բաժին, անմիջապես ձերբակալվել է, նրա մասնակցությամբ կատարվել են մի շարք քննչական գործողություններ, որից հետո 18.01.2014թ. Ա.Պողոսյանը ուղարկվել է Երևանի ՁՊՎ: 20.01.2014թ. ժամը 12.10-ին Ա.Պողոսյանը դուրս է բերվել Երևան քաղաքի ՁՊՎ-ից և տեղափոխվել Կենտրոնականի քննչական բաժին, որտեղ վերջինիս մեղադրանք է առաջադրվել, այնուհետև ապահովվել է նրա ներկայությունը դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննության առնելու համար: Քննիչի միջնորդությունը մերժվել է և դատարանի ու արգելանքից ազատելու մասին որոշումներն ուղարկվել են Երևանի ՁՊՎ:

Դիտորդների խմբի կողմից արձանագրված գրեթե բոլոր դեպքերում վարույթն իրականացնող մարմնի կողմից արգելանքից ազատելու մասին որոշումները ՁՊՎ են ուղարկվել դրանք կայացնելուց անմիջապես հետո, իսկ ուշացումով հասցեատիրոջը հասնելը հիմնականում պայմանավորված է եղել տեխնիկական բնույթի խնդիրներով:

<<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 06.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 16-րդ գլխի (քննչական գործողություններին ձերբակալվածների մասնակցությունն ապահովելը) համաձայն, ՁՊՎ վարչակազմը պարտավոր է քննիչի ցուցումով ապահովել ՁՊՎ-ում պահվող անձանց մասնակցությունը քննչական գործողություններին, որի վերաբերյալ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

Միաժամանակ հայտնվում է, որ քննչական գլխավոր վարչության կողմից ենթակա ստորաբաժանումներին հանձնարարական է տրվել քննչական գործողություններ կատարելու համար ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցումն ապահովելու նպատակով առաջնորդվել ՀՀ կառավարության 02.04.2009թ. թիվ 351-Ն որոշման 40 և 41 կետերի պահանջներով, իսկ դատարանի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը չբավարարելու կամ կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից պարտադիր կերպով կայացնել անձին արգելանքից կամ կալանքից ազատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ և 142-րդ հոդվածներով նախատեսված որոշումներից որևէ մեկը՝ պահպանելով <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ ոստիկանության շտաբ